

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2026

ՀՖՖ Արտոնագրման բաժին

Օգոստոս 2026 թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Ակումբների Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության տասներեքերորդ հրատարակությունը 2026/2027 թվականների արտոնագրման մրցաշրջանի և 2025 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ներկայացնում է հայկական պրոֆեսիոնալ ակումբային ֆուտբոլը՝ ներառելով Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների վերաբերյալ համեմատական վերլուծություն: Այս փաստաթուղթը հրատարակվում է տասներեքերորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով թողարկվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Զեկույցն իր մեջ ներառում է 2026/2027 թվականների արտոնագրման մրցաշրջանի և 2025 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որն ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում:

Ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը իրականություն է դարձել մեր ակումբների և ՀՖՖ ստորաբաժանումների կողմից ցուցաբերած աջակցության և պատրաստակամության շնորհիվ, որոնք պատշաճ կերպով տրամադրել են զեկույցի մեջ ներառված համապատասխան տեղեկատվությունը: Օգտվելով առիթից՝ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի Պրեմիեր Լիգայի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման «Համեմատական վերլուծություն» զեկույցն անկասկած կնպաստի հայկական ֆուտբոլում թափանցիկության մակարդակի բարձրացմանն, ինչն էլ, իր հերթին, հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

Տաթևիկ Ասատրյան
ՀՖՖ Գլխավոր քարտուղարի տեղակալ
ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության նախագծի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. *ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ*
ԳԼՈՒԽ 2. *ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ*
ԳԼՈՒԽ 3. *ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ*
ԳԼՈՒԽ 4. *ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ*
ԳԼՈՒԽ 5. *ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ*
ԳԼՈՒԽ 6. *ՋԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ*

ԳԼՈՒԽ 1: ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծությունը շարունակում է մնալ իր տեսակի մեջ հայկական ֆուտբոլին վերաբերող միակ ուսումնասիրությունը՝ մի կողմից հանդիսանալով ակումբային ֆուտբոլի ուղեցույցը, մյուս կողմից՝ կատարելով ժամանակակից ֆուտբոլի կարևոր միտումերի արձանագրման և փաստաթղթավորման գործընթացը: Վերլուծությունը, հիմնվելով փաստերի վրա, ներկայացնում է անցնող մրցաշրջանում արձանագրված, և՛ դրական, և՛ բացասական միտում ունեցող իրադարձությունները: ՀՖՖ Արտոնագրման բաժինը սույն վերլուծությունը կազմել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 6 չափանիշների (մարզական, կադրային և վարչական, իրավական, ենթակառուցվածքային, ՍԲԿ և ֆինանսական) հիման վրա՝ պահպանելով անկախության և գաղտնիության պատշաճ մակարդակը:

Վերլուծության հիմնական առանցքն են կազմում նախորդ 18 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությունը, կայացված որոշումների համեմատությունները՝ ըստ Ազգային, Առաջին խմբի, ՈւԵՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների լիգայի արտոնագրման գործընթացների, մարզասերների՝ ներքին առաջնություններին խաղերի հաճախելիությունը, Հայաստանի Fastex Պրեմիեր Լիգայի հանդիպումերին մասնակցած ֆուտբոլիստների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմված տեղեկությունները եկամուտների ու ծախսերի վերաբերյալ:

2026/2027 մրցաշրջանի Ազգային արտոնագիր ստանալու համար դիմել է 12 ակումբ: Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2026/2027 մրցաշրջանին մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագիր ստացել են 12 ակումբներից 11-ը՝ «Արարատ» ՖԱ-ն, «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն, «Ալաշկերտ» ՖԱ-ն, «Գանձասար» ՖԱ-ն, «Նոա» ՖԱ-ն, «Շիրակ» ՖԱ-ն, «Սարդարապատ» ՖԱ-ն, «Սյունիք» ՖԱ-ն, «Վան» ՖԱ-ն, «Ուրարտու» ՖԱ-ն և «Փյունիկ» ՖԱ-ն, իսկ 1 ակումբ ՝«Անդրանիկ» ՖԱ-ն մերժվել է:

ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի 2026/2027թթ. առաջնության արտոնագիր ստանալու համար դիմել էին 6 ակումբներ: Առաջին խմբի 2026/2027թթ. առաջնությունում հանդես գալու իրավունք տվող արտոնագիր են ստացել դիմած բոլոր 6 ակումբները ՝ «Լեռնային Արցախ» ՖԱ, «Միկա» ՍԱ, «Արարատ Արաքս» ՖԱ, «Բենտոնիտ» ՖԱ, «Օլիմպիա» ՖԱ , «Հայք» ՍԱ:

2026/2027թթ. մրցաշրջանի Առաջին խմբի առաջնության մասնակից ակումբների թիվը կազմել է 7 ակումբ(«Անդրանիկ» ՖԱ)՝ համաձայն ՀՀ Առաջին խմբի ակումբների արտոնագրման կանոնակարգի (խմբագրություն 2026թ) հոդված 13.05-ի:

2026/2027 մրցաշրջանի ՈւԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար դիմել է 7 ակումբ: Բոլոր 7 ակումբները՝ «Նոա» ՖԱ-ն, «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն, «Ալաշկերտ» ՖԱ-ն, «Շիրակ» ՖԱ-ն, «Արարատ» ՖԱ-ն, «Փյունիկ» ՖԱ-ն և «Ուրարտու» ՖԱ-ն բավարարել են ՈւԵՖԱի արտոնագիր ստանալու համար սահմանված չափանիշները և ստացել են 2026/2027 մրցաշրջանում ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերում հանդես գալու իրավունք ընձեռող արտոնագիր:

2026/2027 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների Լիգայի արտոնագիր է ստացել մեկ ակումբ՝«Փյունիկ» ՖԱ-ն:

6
Առաջին խմբի առաջնության արտոնագիր

11
Ազգային արտոնագիր

7
ՈՒԵՖԱ -ի արտոնագիր

2006-2026/2027 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած, մերժված և հետ կանչված
Ազգային արտոնագրեր



2020/2021-2026/2027թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված
Առաջին խմբի արտոնագրեր



2009-2026/2027 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



2020/2021-2026/2027 թթ. ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների Լիգայի արտոնագրեր



ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

Անցկացնելով համեմատականներ Հայաստանի Պրեմիեր լիգայի 2025/2026 մրցաշրջանի և նախորդ՝ 2024/2025 մրցաշրջանի հաճախելիության ցուցանիշների միջև՝ ակնհայտ է դառնում, որ երկրպագուների հետաքրքրվածությունը շարունակում է մնալ համեմատաբար բարձր, թեև առանձին ակումբների հաճախելիության ցուցանիշներում արձանագրվել են ինչպես աճ, այնպես էլ նվազում: Հաճախելիության առանձին ցուցանիշների փոփոխությունները մեծամասամբ պայմանավորված են ակումբների մարզական արդյունքներով, մրցաշարային դիրքով և տնային հանդիպումների նկատմամբ երկրպագուների հետաքրքրվածության փոփոխությամբ:

Եթե հիմք ընդունենք 2025/2026 մրցաշրջանի մեկ խաղի միջին հաճախելիության ցուցանիշը՝ 465 հանդիսական, ապա կտեսնենք, որ 2024/2025 մրցաշրջանի (մեկ խաղին՝ միջինը 438 հանդիսական) համեմատ FASTEX ՀՊԼ-ի հանդիպումների միջին հաճախելիությունը ավելացել է 27 հանդիսականով կամ 6.2 %-ով:

Սեփական հարկի տակ հանդիպումների ժամանակ երկրպագուների ամենամեծ աջակցությունն ունեցել է Երևանի «Արարատ-Արմենիա» ֆուտբոլային ակումբը, որի տնային հանդիպումներին միջինը ներկա է եղել 587 հանդիսական: Հաճախելիության բարձր ցուցանիշներ են գրանցել նաև «Նոա» ՖԱ-ն՝ միջինը 577 հանդիսական, «Ուրարտու» ՖԱ-ն՝ 543 հանդիսական և «Փյունիկ» ՖԱ-ն՝ 500 հանդիսական:

Տնային հանդիպումներին ամենացածր հաճախելիությունն ունեցել է «Վան» ֆուտբոլային ակումբը՝ միջինը 150 հանդիսական: Համեմատաբար ցածր հաճախելիության ցուցանիշներ են գրանցել նաև «Արարատ» ՖԱ-ն՝ 190 հանդիսական և «Ալաշկերտ» ՖԱ-ն՝ 267 հանդիսական:

Նախորդ մրցաշրջանի համեմատ հաճախելիության ամենամեծ աճը գրանցել է «Արարատ-Արմենիա» ֆուտբոլային ակումբը, որի տնային հանդիպումների միջին հաճախելիությունը 245-ից աճել է մինչև 587 հանդիսական: Զգալի աճ են արձանագրել նաև «Գանձասար» ՖԱ-ն (248-ից՝ 450), «ԲԿՄԱ» ՖԱ-ն (265-ից՝ 389), «Ալաշկերտ» ՖԱ-ն (125-ից՝ 267) և «Ուրարտու» ՖԱ-ն (391-ից՝ 543):

Միաժամանակ նախորդ մրցաշրջանի համեմատ հաճախելիության նվազում է արձանագրվել «Նոա» ՖԱ-ում (742-ից՝

577), «Փյունիկ» ՖԱ-ում (589-ից՝ 500), «Շիրակ» ՖԱ-ում (489-ից՝ 430), «Վան» ՖԱ-ում (269-ից՝ 150) և «Արարատ» ՖԱ-ում (204-ից՝ 190) : Հատկանշական է, որ նախորդ մրցաշրջանի առաջատարներից «Նոա» ֆուտբոլային ակումբը, չնայած հաճախելիության որոշակի նվազմանը, շարունակում է մնալ ամենահաճախելի ակումբներից մեկը, իսկ «Արարատ-Արմենիա» ֆուտբոլային ակումբը զգալի առաջընթացի շնորհիվ դարձել է ընթացիկ մրցաշրջանի առաջատարը:

Ընդհանուր առմամբ, 2025/2026 մրցաշրջանի հաճախելիության ցուցանիշները վկայում են, որ FASTEX Հայաստանի Պրեմիեր լիգայի նկատմամբ երկրպագուների հետաքրքրվածությունը շարունակում է պահպանվել: Միաժամանակ ակումբների մարզական արդյունքները, մրցաշարային հաջողությունները և տնային հանդիպումների կազմակերպման առանձնահատկությունները շարունակում են վճռորոշ ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ակումբի հաճախելիության ցուցանիշների վրա:

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2024/2025թթ. - 2025/2026թթ. մրցաշրջանների ակումբների հաճախելիության ցուցանիշներ



2025/2026 FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի
Ակումբների տնային հանդիպումների հաճախելիության միջին ցուցանիշներ



ԳԼՈՒԽ 2. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԵՈՆԵՐՆԵՐ

Ֆուտբոլիստներ և լեգեոներներ

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի ֆուտբոլիստների տարիքային համեմատական վերլուծությունը:

Ակումբ	Միջին տարիք
ԲԿՄԱ	20
ՈՒրարտու	26
Նոա	29
Փյունիկ	28
Արարատ-Արմենիա	**30**
Ալաշկերտ	**26**
Արարատ	27
Գանձասար	28
Վան	28
Շիրակ	26
Առաջնության միջին ցուցանիշ	26,8

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանին մասնակցել է (հայտավորված է եղել առնվազն առաջնության 1 խաղի) ընդհանուր 356 ֆուտբոլիստ: Առաջնությանը մասնակցած 366 ֆուտբոլիստներից 110-ը եղել են լեգեոներներ (ներառյալ ԵԱՏՄ երկրներից ֆուտբոլիստները): Լեգեոներ ֆուտբոլիստների տեսակարար կշիռը FASTEX ՀՊԼ-ում հանդես եկած բոլոր ֆուտբոլիստների մեջ 2025/2026 մրցաշրջանում կազմել է 43%: Հայտավորած արտասահմանցի ֆուտբոլիստների քանակով առաջատարը «Գանձասար» ֆուտբոլային ակումբն է՝ 19 լեգեոներ: «Գանձասար» ՖԱ-ին հաջորդում է «Նոա» ՖԱ-ն, որի կազմում 2025/2026 մրցաշրջանում հայտավորված է եղել 18 լեգեոներ: Ամենաքիչ քանակով լեգեոներներներներ հանդես են եկել «Շիրակ» ՖԱ-ում՝11 լեգեոներ:

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանին մասնակցած ֆուտբոլիստների միջին տարիքը 26,8 է: Նախորդ առաջնությունում ֆուտբոլիստների միջին տարիքը գրեթե նույն էր՝ 25,22 տարեկան:

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 առաջնությանը մասնակցած թիմերից ամենաերիտասարդ կազմը ունեցել է «ԲԿՄԱ» ՖԱ-ն: «ԲԿՄԱ» ՖԱ-ի ֆուտբոլիստների միջին տարիքը եղել է 20 տարեկան: Այս փաստը պայմանավորված է նրանով, որ «ԲԿՄԱ» ՖԱ-ում հանդես են գալիս հիմնականում 18-20 տարեկան զինծառայող ֆուտբոլիստները:

Հաջորդ «ամենաերիտասարդ» թիմերն են «ՈՒրարտու» ՖԱ ,«Շիրակ» ՖԱ և «Ալաշկերտ» ՖԱ՝ 26 տարեկան:

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանի «ամենատարեց» թիմն «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն է (ֆուտբոլիստների միջին տարիքը՝ 30):

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 ակումբներում հանդես եկած լեգեոներ ֆուտբոլիստներ



ԳԼՈՒԽ 4.

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Եկամուտներ և ծախսեր

Համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ FATEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են տարեկան պարտադիր աուդիտի, որի արդյունքները ներկայացվում են ՀՖՖ Արտոնագրման բաժին: Այս տարին էլ բացառություն չէր այդ տեսանկյունից:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: 2026 թվականին FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10 ակումբներից 7-ը դիմել են և ստացել են ՈՒԵՖԱ-ի արտոնագիր:

7 ակումբից 4-ը մարզական չափանիշով որակավորվել են հնարավորություն ստանալով մասնակցելու 2025/2026 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:

Ֆինանսական չափանիշի պահանջներին բավարարելու համար ակումբները պետք է ներկայացնեն ֆինանսական վիճակի, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի, ինչպես նաև սեփական աշխատակիցների, հարկային և սոցապ մարմինների և այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների բացակայության վերաբերյալ հաշվետվություններ:

Ստացված տեղեկատվության ուսումասիրությունից պարզ է դառնում, որ 2024 թվականի համեմատությամբ 2025թ ֆինանսական տարում ՀՀ ակումբների ընդհանուր եկամուտները աճել են շուրջ 17,21%-ով: 2025 թվականին ՀՀ ակումբների ընդհանուր ծախսերը նույնպես աճել են 28,51%-ով:

Հարկ է նշել, որ ակումբների հիմնական եկամտի աղբյուրները շարունակում են մնալ ՈՒԵՖԱ-ից ստացված պարգևավճարները, համերաշխության գումարները և ակումբների սեփականատերերի/հիմնադիրների անձնական ներդրումները:

2025/2026 FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների 2025թ. ֆինանսական տարվա ծախսերը(հազար ՀՀ դրամ)



2025/2026 FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների 2025թ. ֆինանսական տարվա եկամուտները (հազար ՀՀ դրամ)



2025/2026 FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների հաշվապահական հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազար ՀՀ դրամ)



ԳԼՈՒԽ 5.
ՄԵԴԻԱ և ՄԱՐՔԵԹԻՆԳ

Մեդիա և Մարքեթինգ

Վերջին տարիներին հայկական ակումբները ավելի մեծ կարևորություն են տալիս սոցիալական և լրատվական հարթակներում ակտիվությանը: Այս մոտեցումը հանգեցրել է նրան, որ 2025/2026 մրցաշրջանում էապես ավելացել է նաև ակումբների լսարանը սոցիալական հարթակներում:

FASTEX Հայաստանի Պրեմիեր Լիգայի բոլոր ակումբները հետևորդների ամենամեծ բանակն ունեն Instagram-ում: Instagram-ում ամենաշատ հետևորդ ունի «Նոա» ՖԱ-ն՝ մոտ 62,500 հետևորդ:

«Նոա» ՖԱ-ին հաջորդում է «Փյունիկ» ՖԱ-ն, որն ունի մոտ 27,300 հետևորդ: Instagram-ում հետևորդների քանակով 3-րդ հորիզոնականում է «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն՝ 22,500 հետևորդ: Ամենաքիչ հետևորդներ Instagram -ում ունի «Գանձասար» ՖԱ-ն՝ 1,400 հետևորդ:

FASTEX Հայաստանի Պրեմիեր լիգայի ակումբների շրջանում TikTok հարթակում ամենաշատ հետևորդներ ունի «Փյունիկ» ՖԱ-ն՝ շուրջ 9,400 հետևորդ: Երկրորդ հորիզոնականում «Նոա» ՖԱ-ն է՝ մոտ 8,900 հետևորդով, իսկ լավագույն եռյակը եզրափակում է «Արարատ» ՖԱ-ն՝ շուրջ 5,800 հետևորդով: Այս ցուցանիշները վկայում են, որ TikTok հարթակը նույնպես աստիճանաբար դառնում է հայկական ակումբների թվային հաղորդակցության կարևոր հարթակներից մեկը:

FASTEX Հայաստանի Պրեմիեր լիգայի ակումբների պաշտոնական սոցիալական հարթակների հետևորդների քանակը



Մարզահագուստի ապրանքանիշեր և տիտղոսային հովանավորներ

Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների մարքեթինգային քաղաքականությունն ու տեսողական իմիջը վերջին տարիներին նկատելիորեն վերափոխվել են՝ վերածվելով հստակ հաշվարկված ռազմավարության: 2026/2027 մրցաշրջանն այս առումով աչքի է ընկնում հստակ զարգացումներով, որոնք վերաբերում են ինչպես մարզահագուստի ընտրությանը, այնպես էլ տիտղոսային հովանավորների ներգրավմանը:

Այս մրցաշրջանում հատկապես տպավորիչ է տեղական «Melante» ապրանքանիշի դիրքերի կտրուկ ամրապնդումը: Եթե նախորդ՝ 2025/2026թթ. մրցաշրջանում «Շիրակ» ՖԱ-ն հանդես էր գալիս «Adidas» բրենդի մարզաշապիկով, իսկ «Գանձասար» ՖԱ-ն՝ «Kelme» բրենդի մարզաշապիկով, ապա այժմ երկու ակումբներն էլ ընտրել են տեղական արտադրողին: Արդյունքում «Melante» բրենդը, հանդերձավորելով նաև «Արարատ» ՖԱ-ին ու «Ուրարտու» ՖԱ-ին, դարձել է առաջնության ամենապահանջված բրենդը: Նմանատիպ փոփոխություն է տեղի ունեցել նաև «Փյունիկ» ՖԱ-ի պարագայում, որը «Joma» բրենդի մարզաշապիկից անցում է կատարել «Jogel» բրենդի մարզաշապիկին՝ միանալով «Ալաշկերտ» ՖԱ-ին: Միևնույն ժամանակ, «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն ու «ԲԿՄԱ» ՖԱ-ն պահպանել են իրենց կայուն համագործակցությունը իտալական «Macron» բրենդի հետ, իսկ մյուս թիմերը նախընտրել են ինքնուրույն տարբերակներ՝ չկրկնելով մրցակիցների հանդերձանքները:Մարզաշապիկների արտաքին տեսքին զուգահեռ՝ փոխվել է նաև դրանց առևտրային արժեքը: Վերջին տարիների ակտիվ մարքեթինգի շնորհիվ 2026/2027 մրցաշրջանի 10 ակումբներից 6-ն արդեն ունեն տիտղոսային հովանավորներ, ինչը վկայում է առաջնության աճող գրավչության մասին:

Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2026/2027թթ Մրցաշրջանի Ակումբների Մարզահագուստների Ապրանքանիշներ

Jogel

- Փյունիկ
- Ալաշկերտ

Melante

- Ուրարտու Գանձասար
- Արարատ Շիրակ

Macron

- ԲԿՄԱ
- Արարատ-Արմենիա

Adidas

- Նոա

Joma

- Վան

ԳԼՈՒԽ 6. ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

FASTEX Հայաստանի Պրեմիեր լիգայի 2025/2026 մրցաշրջանը հայկական ֆուտբոլի համար նշանավորվեց մի շարք կարևոր ձեռքբերումներով,որոնք վկայում են ինչպես ակումբային, այնպես էլ ազգային ֆուտբոլի շարունակական զարգացման և միջազգային ճանաչման մասին:

- Մրցաշրջանի կարևորագույն իրադարձություններից մեկը Հայաստանում առաջին անգամ ՈՒԵՖԱ-ի Football Doctor Education Programme (FDEP) կրթական ծրագրի անցկացումն էր:
  Վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայի Բժշկական դեպարտամենտի իրականացրած հետևողական աշխատանքի, ոլորտային բարեփոխումների և Ֆեդերացիայի աջակցության արդյունքում այս տարի Հայաստանում անցկացվեց ՈՒԵՖԱ-ի Ֆուտբոլային բժիշկների կրթական ծրագիրը (FDEP): Ծրագրին մասնակցեցին ՈՒԵՖԱ-ի անդամ 51 ֆուտբոլային ասոցիացիաների բժիշկներ՝ հնարավորություն ստեղծելով մասնագիտական փորձի փոխանակման, միջազգային լավագույն փորձի ներդրման համար: FDEP-ի անցկացումը Հայաստանում կարևոր քայլ է ֆուտբոլիստների առողջության և անվտանգության ապահովման,համակարգի կատարելագործման և ֆուտբոլային բժշկության միջազգային չափանիշների ներդրման ուղղությամբ: Այն նաև վկայում է Հայաստանի բժշկական ենթակառուցվածքների և մասնագիտական կարողությունների նկատմամբ միջազգային վստահության աճի մասին: Ծրագիրը նոր հնարավորություններ է ստեղծում նաև ոլորտի մասնագետների հետագա կրթության և միջազգային համագործակցության ընդլայնման համար:

- «Նոա» ֆուտբոլային ակումբը գրանցեց հայկական ակումբային ֆուտբոլի պատմության կարևորագույն հաջողություններից մեկը՝ դառնալով պատմության մեջ առաջին հայկական ակումբը, որը դուրս եկավ ՈՒԵՖԱ-ի Կոնֆերենցիաների լիգայի փլեյ-օֆֆ փուլ: Փլեյ-օֆֆի ճանապարհին «Նոա» ՖԱ-ի մրցակիցը նիդերլանդական «ԱԶ Ալկմար» ակումբն էր: Հատկանշական է, որ «Նոան» սեփական հարկի տակ 1:0 հաշվով հաղթանակ տարավ «ԱԶ Ալկմար» ՖԱ-ի նկատմամբ՝ գրանցելով պատմական հաղթանակ եվրոպական մրցաշարերում: Այս արդյունքը կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն ակումբի, այլև ամբողջ հայկական ֆուտբոլի համար՝ բարձրացնելով Հայաստանի ներկայացվածությունն ու մրցունակությունը եվրոպական ֆուտբոլային հարթակում: «Նոա» ՖԱ-ի հաջողությունը նաև ցույց տվեց, որ հայկական ակումբներն ունակ են մրցելու եվրոպական բարձր մակարդակի թիմերի դեմ և գրանցելու պատմական արդյունքներ:

❖ Միջազգային համագործակցության ամրապնդման և եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով ՀՖՖ Արտոնագրման բաժինն առաջին անգամ մասնակցեց ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման փոխանակման ծրագրին: Ծրագիրն իրականացվեց երեք փուլով՝ առաջին փուլը՝ Լատվիայում, երկրորդը՝ Հայաստանում, իսկ ամփոփիչ երրորդ փուլը՝ Շվեյցարիայում: Ծրագրի շրջանակներում քննարկվեցին ակումբների արտոնագրման գործունեության հիմնական սկզբունքները, 6 պարտադիր չափանիշները, որոշում կայացնող մարմինների գործառույթները, ինչպես նաև ֆուտբոլի կառավարման համակարգում աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմները:Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում կանանց ֆուտբոլի զարգացմանը, ամենամյա SGS աուդիտների արդյունքներին, ակումբների հետ հաղորդակցության արդյունավետ միջոցներին և ոլորտում առկա հիմնական մարտահրավերներին:Ծրագրի ընթացքում ուսումնասիրված եվրոպական լավագույն փորձը հնարավորություն կտա շարունակաբար կատարելագործել ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգը:

❖ Հայկական ակումբները վստահ և տպավորիչ մեկնարկեցին նոր ֆուտբոլային տարին՝ գրանցելով հաջող ելույթներ եվրագավաթային ասպարեզում: Սա 2026/2027թթ մրցաշրջանի փայլուն սկիզբ էր մեր թիմերի համար, որոնք կրկին ապացուցեցին հայկական ֆուտբոլի աճող մրցունակությունն ու ներուժը միջազգային հարթակում:
«Փյունիկ», «Ալաշկերտ», «Նոա» և «Արարատ-Արմենիա» ֆուտբոլային ակումբները հիանալի խաղ ցուցադրեցին ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի և Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փուլերում՝ հաջողությամբ հաղթահարելով մեկնարկային արգելքները: Այս դժվարին ու լարված դիմակայություններում հայկական ակումբները ոչ միայն հաջողությամբ դիմակայեցին ճնշմանը և պարտադրեցին իրենց խաղը եվրոպական փորձառու մրցակիցներին, այլև ապացուցեցին, որ այս հաղթանակները շատ ավելին են, քան պարզապես անցում հաջորդ փուլ:
Դրանք վերադարձնում են տոնը հայկական մարզադաշտեր, կարևոր վարկանիշային միավորներ են ապահովում Հայաստանի համար և, որ ամենակարևորն է, հպարտությամբ ու արժանապատվորեն են ներկայացնում հայկական ֆուտբոլը ողջ Եվրոպայում:

❖ Ամփոփելով հայկական ֆուտբոլի ձեռքբերումներն ու զարգացման ընթացքը՝ թերևս ամենանշանակալի և մասշտաբային իրադարձությունն այն է, որ 2029 թվականին Հայաստանը և Վրաստանը համատեղ կհյուրընկալեն ՖԻՖԱ-ի մինչև 20 տարեկանների աշխարհի առաջնությունը: Այս պատմական որոշումը վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացման, այլև ֆուտբոլային ենթակառուցվածքների և կազմակերպչական կարողությունների զարգացման տեսանկյունից:Առաջնության նախապատրաստական աշխատանքների շրջանակում Հայաստանում նախատեսվում է կառուցել նոր մարզական ենթակառուցվածքներ Իջևանում և Վանաձորում, ինչպես նաև վերականգնել և արդիականացնել Երևանի Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտը: Նախատեսվող ծրագրերը երկարաժամկետ ներդրում են հայկական ֆուտբոլի զարգացման գործում: Ստեղծված ժամանակակից ենթակառուցվածքներն ու միջազգային չափանիշներին համապատասխան պայմանները հնարավորություն կտան հետագայում ևս խոշոր միջազգային մրցաշարեր հյուրընկալել:

Հեղինակ՝

Լաուրա Տիրատուրյան ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի մասնագետ

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2026» զեկույցի ստեղծմանը նպաստել են՝

Նաիրա Աբրամյան ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի պետ

Նունե Սարգսյան ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի պետի տեղակալ

Սյուզաննա Գաբրիելյան ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի ֆինանսական փորձագետ

Մարզադաշտերի հավաստագրման և պատվիրակների բաժին

Մրցումների կազմակերպման և անցկացման բաժին



«Ֆուտբոլը միայն խաղ չէ. այն տարբեր մշակույթների, արժեքների և մտածելակերպերի արտացոլումն է, որոնք հանդիպում են նույն դաշտում»